

Ա Մ Ա Ն Ո Ր Ե Ա Յ Ա Ղ Ե Ր Ս Ա Ն Գ Ն Ե Ր

ՅԱՄԵՑԱԾ ՍՏՈՒԳԱՅՑ

Ջենոբ Քինյ. Նալպանտեան

**«Կայ մի ուրիշ մարմին, որ աւելի ու աւելի
պաշտելի է, քան մեր սեփականը:
Այդ մարմինը հայրենիքն է»:
Մուրացան**

Պահն է, ո՛վ Մայր Հայաստանի, դուրս գալու թաքստոցէդ եւ այց մը կատարելու հեռաւոր աշխարհներու մէջ բնակութիւն հաստատած ցաքուցրիւ հայ զաւակներուդ:

Ստոյգ, որ ստուգայցդ յամեցած է, ո՛վ գորովալից մայր: Հայութեան աչքերը լայնցած են ու կարմրած՝ օտարութենէ ու արցունքահոսութենէ: Ինչքա՛ն երագած են քեզ այս կարօտակէզ աչքերը՝ ջերմանալու շունչովդ, ներշնչուելու ներկայութեամբդ, գօտեպնդուելու խօսքերովդ, մխիթարուելու տեսքովդ ու պարտուելու մեղոյշ հայեացքովդ: Ոչ հեռաւոր անցեալին, քեզ թոյլ չտուին այցի գալու հոգեհարազատներուդ, վասնզի ճնշման տարիներուն, կաշկանդեցին ազատութիւնդ ու բռնադատեցին քեզ աշխատելու խղճիդ ու կամքիդ հակառակ: Աշխարհին յայտնի է թէ ի՛նչ կսկծալի ու տառապալի օրեր ապրեցար դուն տասնեակ տարիներով: Լռութեամբ ու վեհ կեցուածքովդ տոկացիր ու առնական դիմադրականութիւն ցուցաբերեցիր ի դիմաց բիրտաւոր նուաստացումներուն եւ արուեստական (աւելի ճիշդ՝ մարդաստեղծ) սեղմումներուն և ճնշումներուն: Բայց այսօր, Հայաստանի գորովագութ մա՛յր, դուն ազատ ես կրկին, կանգնած ես հպարտ ու կրնաս ճախրիլ, պատռել երկինքը, կտրել ովկիաններ ու հասնիլ պանդուխտ զաւակներուդ ու տէր կանգնիլ վերստին: Ճշմարիտ որ ստուգայցդ կենսական է հայութեան համար:

Արդ ուրեմն, թո՛ւր հրեղէն կառքովդ և հասիր, ուր արտասահմանի մէջ տարածուած ու կոտորակուած զաւակներդ անձկութեամբ կը սպասեն քեզի: Ե՛կ, տե՛ս հարազատ աչքերովդ, թէ ինչպէ՛ս ամբողջ սփիւռքը փոթորիկի բռնուած, բեկեալ նաւի մ'հանգոյն, կը տարութերի ու սաստիկ կը կարօտի լուսաւորութեան,

ուղղութեան, անմիջական օգնութեան:

Դուն, ո՛վ Մայր Հայոց, որ դարերով հոգացած ես ծովածաւալ կարիքները ձագերուդ, եւ երբեք չես անտեսած անոնց հոգեւոր պահանջները ու նիւթական կարիքները, այժմ անմիջապէս օգնութեան փութա՛ ամէնքին, վասնզի հասած անդնդեզրին՝ «ահա կորնչիմք»:

Դուն, որ եղած ես անմար փարոս կորուսեալ նաւապետին, փրկարար լաստ և ուղեկից՝ տկարին, որբին ու լքեալին, ժամն է որ ժամանես:

Յետ եղեռնեան վերջին տասնամեակներուն, երբ ոսխի սուրեն մագապուրծ աստանդական հայը, ցուպն ի ձեռին, տարածուեցաւ ի սփիւռս աշխարհի և դարձաւ աշխարհաքաղաքացի, ան անմիջապէս կազմեց իր բոյնը օտար հողերու վրայ և հաստատեց իր հաւատքի ու մշակոյթի կեդրոնները: Մեծ ձեռներէցութեամբ բարձրացուց շքեղ կառոյցներ, ազգապահպանման օճախներ, և ոգի ի բռին տքնեցաւ հեռու մնալ ուծացումէ: Ան այս վերջին հարիւր տարուայ ընթացքին, աշխարհին յարգանք պարտադրեց իր ներկայութեամբ և զմայլանք պատճառեց իր մեղուաջան աշխատասիրութեամբ ու ստեղծագործական հանճարով: Այսօր, աշխարհի վրայ չկայ անկիւն մը, ուր հայը ապաստան գտած չըլլայ: Չկա՛յ գիտութեան մարզ մը, որուն հայը ընծայաբերած չըլլայ իր համեստ լուծանք: Չկա՛յ արուեստի ճիւղ մը, որուն մէջ հայը նուաճած չըլլայ բարձունք մը: Եւ այսպէս, Մայր մեր Հայոց, զաւակներդ, թէպէտեւ ցիրուցան, բայց հաւաքուած հոգատար թելերուդ տակ, մեղոյշ հայեացքիդ ներքոյ, փարած քեզ կաթոգին, մնացած են քեզ միշտ հաւատարիմ՝ բարձր պահելով անունը և պատիւը հայութեան:

Ո՛վ քնքոյշ Մայր Հայոց, ստուգայցիդ, սակայն, սրտամորմոք պիտի նկատես, որ կարգ մը պանդխտացած հայորդիներդ սկսած են լքել Մեսրոպաստեղծ հայ ոսկետառերը: Մեր նախահայրերուն աննման հայերէնը տակաւ առ տակաւ տեղի սկսած է տալ օտար լեզուներու: Ինչքա՛ն ճիշդ բնութագրեց հայ մեծ գրագէտ Շահան Շահնուր, երբ բացագանչեց՝ «Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն... »: Այո՛, կը նահանջէ ան մեծ ու արագ քայլերով, առանց թմբուկի ու աղմուկի, առանց խղճահարութեան, ետդարձի կամ տատամսումի: Չկա՛յ գիտակցութեան նշոյլ մ'իսկ, որ առանց հայ լեզուի, չկայ հայութիւն, հայագագոյդու-

թիւն, հայ մտածողութիւն, հայ հոգեբանութիւն և հայատրոփ սիրտ: Կը գահավիժէ հայոց լեզուն ամենուրեք առանց արգելքի: Վերջնական կորուստը աներկբայ է . . . : Նախընտրութիւնը տրուած է օտար լեզուներուն, որոնք իբրեւ թէ ապագայ կը խոստանան նոր սերունդին:

Արդ, ի՞նչ է լուծումը այս անել ու յուսահատ վիճակին: Ո՞ր է մեր հաւաքական առողջ մտածողութիւնը, դատողութիւնը, տրամաբանութիւնը: Ո՞ր մնաց մեր հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնը, եկեղեցասիրութիւնը: Մէկ առ մէկ յօդ կը ցնդին մեր դարատր արժէքները: Հայոց լեզուն արտասահմանի մէջ անմիջական օգնութիւն կ'աղերսէ ... : Վիճակը բաւական ծանր է ու անդարմանելի մանաւանդ Արեւմտեան հեռաւոր ափերուն վրայ: Հայոց լեզուն՝ մեր հզօրագոյն գրաւականը լինելութեան, պաշտպանը՝ մշտագոյութեան ու ամրոցն ու դարբնոցը մեր մտքի ու հոգիի, լրջօրէն վտանգուած է ներկայիս, ու կ'ապրի իր օրհասականը: Հայ գիրքը կը մնայ դարակներուն վրայ փոշեծածկ: Ընթերցող չկա՛յ, հետաքրքրութիւն չկա՛յ: Անընթերցասիրութիւնը համատարած է ներկայիս: Հայ թերթը, ամսաթերթը, պարբերաթերթը, արժէքազրկուած են ու իջած իրենց նուազագոյն կարելոթեան: Այսքան նսեմացում և մեղանշում հայ լեզուի հանդէպ, անտարակոյս, անհանդուրժելի է ու աններելի:

Արդ, ո՞վ պիտի հնչեցնէ փրկութեան փողը, և բերէ կայծ մը բոցավառելու մարող կրակը: Ո՞վ վերստին պիտի յիշեցնէ մեզի հաւաքաբար որ առանց հայ լեզուի չկայ հայ ազգ ու հայրենիք: Ո՞վ պիտի արթնութեան հրաւիրէ մեր սաստկօրէն թմրած ուղեղները և խամրած գիտակցութիւնը:

Դարերու ընթացքին շատ փոթորիկներ անցուցած ու վերիվայրումներ ապրած հայոց լեզուն այս աստիճան չէր տկարացած ու անպատուուած: Դարերով, մեր երկիրը ասպատակած են մեր թշնամիները, մեր մշակոյթի գոհար արժէքները քանդած, փճացուցած, մեր լեզուն հասցուցած իր վախճանին, այդուամենայնիւ, մեր լեզուն պահուած ու պահպանուած է մասունքի նման և հասած մեզի գոյգ ճանապարհներով՝ գրաւոր և բանաւոր: Ահա այդ լեզուն է որ այժմ կը խամրի, կը դժգունի ու հետզհետէ կ'անհետանայ: Մեր սառն անտարբերութեամբ, մենք եւս կ'արագացնենք անհետացումը դարերու

մրրիկներուն ընդմէջէն տողանցած ու մեզի հասած այդ քնադ մասունքին: Առաւելագոյնը որ պիտի տեսնենք ի մօտոյ, այն պիտի ըլլայ, որ մեր լեզուն պիտի դատուի հին, մեռած ու անգործածելի լեզուներու շարքին, որոնց ճակատագիրն է լոկ մերթ ընդ մերթ յիշուիլ պատմութեան գիրքերու մէջ:

Արդ, ի՞նչ կարելի է ընել փրկելու այս ծանր կացութիւնը: Ի՞նչ կը մտածեն մեր հայրենի իշխանութիւնները, որոնք խիստ մտահոգ պէտք է ըլլան սփիւռքի ալելոծ կեանքով ու անոր բիւրատր կորուստներով: Ունի՞ն շինիչ թելադրութիւններ ազատելու հայ լեզուն, թէ՛ ան դատապարտուած է վերջնական կորստեան: Կա՞յ յոյսի նշոյլ մը: Հայոց լեզուն բարձրադասկ օգնութիւն կը հայցէ...: Ինչպէ՞ս կարելի է կորսնցնել մեր մայր լեզուն, որ մեզի սնուցած է ու պահած դարերով անեղծ:

Ո՛վ Մայր սիրելի ու պաշտելի, մեր լեզուին առնթեր կը նահանջեն նաեւ մեր մաքրամաքուր բարքերը, հայավայել կենցաղակերպը: Փութով կը շոգիանան մեր անտարբեր աչքերուն առջեւ այն բոլոր հոգեւոր ու բարոյական արժէքները, որոնք մեզի աւանդ ձգուած են մեր պաշտելի նախահայրերուն կողմէ: Կենցաղային ու նիստուկացային մեծամեծ փոփոխութիւններ ապրող հայր այսօր ամենուրեք արեւմտականանալու տենչ ու պահանջ կը ցուցաբերէ գրեթէ կեանքի ամէն մարզի մէջ: Յօդս կը ցնդին հայավայել մտածելաձեւը և ապրելակերպը: Ծնողական սեր ու յարգանք, ընտանեկան սրբութիւն, ամուսնական հաւատարմութիւն, մարդասիրութիւն, հիւրասիրութիւն, անկեղծ բարեկամութիւն, միատեղ բնակութիւն, սիրալիք յարաբերութիւն, և այլ նման հայկական հրաշալի կենցաղագիծեր, մեր անտարբեր աչքերուն առջեւ ի սպառ կը շոգիանան:

Մեր հոգեւոր կեանքէն ներս տեղի ունեցած հսկայական փոփոխութիւնները մեզի առաջնորդած են ուժացման: Մեզմէ շատեր, մէկանգամընդմիշտ հեռացած են ոչ միայն իրենց պատմական հողերէն, այլեւ՝ սուրբ ու նուիրական հաւատքէն, արմատէն, ցեղային յատկութիւններէն, միով բանի՝ հայութենէ: Անջատուելով Հայ Մայր Եկեղեցիէն, անոնք առօր-փառօր յարած են կրօնական տարբեր յարանուանութիւններու, որոնցմէ կ'ակնկալեն մեծագումար օժանդակութիւններ, նպաստներ, և ինչո՞ւ չէ ... հոգիներու փրկութիւն: Ծշմարիտ է, որ կարգ մը օտար հոգեւոր հաստատու-

թիւներ գրկաբաց կ'ընդունին հայոց վիրաւոր շերտերը, ձեռք կը կարկառեն լքեալին, անտունին ու անգործին, սակայն անոր դիմաց կը գնեն անհատին հոգին, կ'ուժաքամեն ու կը հիծեն անոր ներքին բարոյական ուժերը, կը ցամքեցնեն հայրենասիրական զգացմունքները ու ազնիւ մղումները: Ո՛վ գորովալի Մայր Հայոց, մայրական բարի խրատներովդ յորդորէ նմանները, որ անոնց մատուցուած ձրի ալիւրը և ձաւարը միայն ու միայն զիրենք շլացնելու համար է, այսինքն՝ աչքի փոշի է, որոնց բարձր զինը պիտի հատուցեն շուտով իրենց կեանքով և ինքնութեան կորուստով: Նմանատիպ մարտավարութիւն անցեալին եւս գործադրուեցաւ հայուն վրայ, երբ ձրի ալիւր բաշխուեցաւ: Այս չար խաղերուն անտեղեակ հայը կը թակարդուի սարդոստայնին մէջ, ուրկէ չիք ամենեւին փրկութիւն: Ահաւոր ողբերգութիւն...: Յիշել է պէտք Գրիգոր Մագիստրոս Պառլաւունիի ազգասիրական մէկ արտայայտութիւնը՝ «Իմ ազգս իմ աչքիս լոյսն է»: Այլ խօսքով, ազգութիւնը առաջնակարգ է ու ոչինչով չի սակարկուիր:

Արտասահմանի այս ափերուն վրայ, քիչեր լոկ կը ճանչնան իրենց հայրենակիցը և բարոյապէս թեւ ու թիկունք կը կանգնին անոր: Նախանձը և ընչաքաղցութիւնը գլած անցած են ամէն մրցանիշ՝ ազգակցութիւն, հարազատութիւն, հայրենակցութիւն...: Ամէն ոք, կծկուած իր պատեանին մէջ, կը վախճայ դուրս գալու և իր ազգակիցին օգտակար ըլլալու: Երկիւղը կը կայանայ անոր մէջ, որ չըլլայ թէ նորեկը նիւթապէս աւելի բարգաւաճ կեանք ապրի, քան՝ ինքը, որ տարիներէ ի վեր տքնաջանօրէն կը պայքարի իր ապրուստին համար: Մա՛յր մեր հարազատ, եկ ցոյց տուր որ հայուն սիրտը եղած է լայն ու սեղանը՝ միշտ բաց ու առատ: Այդ սեղանին մաս կազմած են օտարներ եւս, որովհետեւ հայը հաւատացած է որ հացը Աստուծոյ է, և թէ՛ բարիքը, որ կը կատարէ իր ազգակիցին կամ նմանին, երբեք չի՛ կորսուիր:

Մայր մեր, սորվեցո՛ւր մեզի՝ բազմակոտորակուած հայերուս, թեւ ու թիկունք կանգնիլ իրարու, չըլլալ չարասիրտ ու նենգամիտ, նախանձոտ ու քինախնդիր, այլ ըլլալ՝ բարեսէր, բարեգործ, ազգասէր, հայրենասէր: Բե՛ր մեր ազգին սէր, հաշտութիւն, համագործակցութիւն, փոխադարձ հասկացողութիւն և յարգանք: Ներէ՛ մեր բոլոր տկարութիւնները, և քու հանդէպ մեր ցուցաբերած անտարբերութիւնը մայրական անսահման սիրով հան-

դուրծէ: Մենք քեզ բազմիցս լքեցինք, հեռացանք (և դեռ, աւա՛ղ, կը հեռանանք՝ տասնեակ հազարներով...), և օտար երկնակամարներու ներքեւ ապաստան որոնեցինք: Չէ՞ որ հայաթափութեամբ մեր ազգային ապահովութիւնը կը վտանգուի: Արտագաղթը մեզի ուժաքամ կ'ընէ օրըստօրէ: Մեր դարաւոր ոսոխին նպատակն ալ այդ է արդէն՝ տեսնել մեր հայրենիքը պարպուած, թուլցած, տկարացած: Մեր մեծ գրող Ռաֆայէլ Պատկանեան ի գուր չըսաւ. «Օտարի հողին մի՛ հետամտիլ, բայց քու երկիրն էլ նոցա մի՛ մատնիր»:

Այժմ կը թախանձենք քեզի, որ այցի գաս մեզի և զօրացնես մեզի հոգեւին, մեր ողջ էութիւնը կապես մեր մայր հողին, մեր դարաւոր արմատներուն ու սխրալի պատմութեան: Այցովդ պիտի վերարծարծուի մեր հայրենասիրական նուիրական զգացմունքը, պիտի ամրանայ մեր թուլցած կապը մեր հայրենիքի հետ՝ մեզի դարձնելով հարազատ զաւակները Հայոց Աշխարհի:

Մեր խոնջած աչքերը քեզի յառած, կը սպասենք գալստեանդ:

Թող գալուստդ ըլլայ բարի:

2015

